



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան

« 03 » 07 2024 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՋՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 107 - 24

Նախաձեռնող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ
ք. Երևան, Չարենցի 1

Գործունեությունը՝

«Կոտայք-9» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված
տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա
միջավայրի վրա ազդեցության ռազմավարական
էկոլոգիական գնահատման հաշվետվություն
Կոտայքի մարզ

Առդիր՝ 8 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ԲՓ № 107 - 24

« 03 » 07 2024թ.

«Կոտայք 9» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝

«Հայնախագիծ» ԲԲԸ

Ներկայացված նյութեր՝

Հիմնադրությամբ փաստաթուղթ.

- Շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն,
գծագրական նյութեր

Ներածական մաս. Կոտայքի մարզի (այսուհետ՝ Մարզ) «Կոտայք 9» միկրոռեզիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը մշակվել է քաղաքաշինության կոմիտեի պատվերով (N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-23/2), տրամադրված Տեխնիկական բնութագրին համապատասխան:

Միկրոռեզիոնալ մակարդակի նախագիծն իրենից ներկայացնում է բազմանպատակ նախագիծ, որը հիմնականում նպատակաուղղված է տարածական-տնտեսական գործունեության համակարգված կազմակերպմանը, տարածաշրջանի և համայնքների գործառնական-հատակագծային տնտեսական և մշակութային կապերի, ճարտարապետա-հատակագծային կառուցվածքի և ֆունկցիոնալ գոտևորման խնդիրների լուծմանը՝ քաղաքաշինության, արտադրության զարգացմանը նպաստող արդյունավետ պայմանների և բնական միջավայրի, նյութական մշակութային ժառանգության պահպանման ու կատարելագործման ապահովմամբ, բնական, տնտեսական և աշխատանքային ռեսուրսների համալիր և արդյունավետ օգտագործմամբ:

Նկարագրական մաս. Կոտայքի մարզը գտնվում է ՀՀ կենտրոնական մասում, ծովի մակերևույթից մոտ 900-2500 մ բարձրության վրա: Վարչական կենտրոնը Հրազդան քաղաքն է: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Մարզի տարածքով են անցնում Երևան-Շոթա և Հրազդան-Իջևան երկաթուղիները, իսկ մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք ընդամենը 45 կմ է: Մարզի տարածքն ընդգրկում է Կոտայքի սարավանդը, Մարմարիկ գետի ավազանը, Հրազդան գետի ավազանի վերին ու միջին հատվածը, ինչպես նաև Գեղամա լեռնաշղթայի արևմտյան լանջերը: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մարմարիկին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին: Մարզի տարածքը 2076 քառակուսի կմ ընդունում է 320000 բնակչություն:



Մարզի տարածքով են անցնում Թբիլիսի-Երեւան երկաթուղու մի հատվածը: Մարզում գրանցված են 3208 պատմամշակութային արժեքներ և հուշարձաններ: Կոտայքի մարզը միակ մարզն է, որը միջպետական սահման չունի ՀՀ հարևան որևէ պետության հետ:

Մարզը հարուստ է պատմամշակութային հուշարձաններով, որոնց մեջ հիշարժան է Գառնու հեթանոսական տաճարը, նշանավոր են նաև Բջնի բերդը, միջնադարյան Կեչառիսի վանքային համալիրը և Գեղարդավանքը և այլն:

Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է: Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է: Մարզը մեծ դեր ունի էներգետիկայի ոլորտում՝ այստեղ են գտնվում էլեկտրաէներգիայի արտադրության 2 խոշոր կազմակերպություն: Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է՝ սննդամթերքի և խմիչքների արտադրություն, ոչ մետաղական հանքային այլ արտադրատեսակների արտադրություն, հիմնական մետաղների արտադրություն, ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք զարդերի արտադրություն և այլն:

Մարզի գյուղատնտեսությունը մասնագիտացած է թռչնաբուծության մեջ: Մարզի տարածքում են գործում հանրապետության 3 խոշոր թռչնաֆաբրիկաներ: Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (ճոպանուղի): Մարզը հարուստ է հանքային ջրերով, դրա վկայությունն են «Բջնի», «Հանքավան» և «Արզնի» հանքային ջրերը:

Ըստ բարձրության՝ կլիմայական պայմանները փոխվում են տաք չոր ցամաքայինից մինչև ձյունամերձ: Օդի տարեկան միջին ջերմաստիճանը տատանվում է 10°C-ից մինչև 2.5°C: Տարվա ամենատաք ամիսը հուլիսն է, իսկ ամենացուրտը՝ հունվարը: Կոտայքի մարզի ցածրադիր շրջաններում միջին հունվարյան ջերմաստիճանը կազմում է 4.5-5°C: Բարձրադիր շրջաններում հունվարյան ջերմաստիճանը նվազում է մեկ և ավելի ջերմաստիճանով՝ -3.6°C: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը նորմայից բարձր է՝ 400-970 մմ:

ՄՄՀՏՊԳ նախագծերում նշված համայնքները ներառում են Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքները, կենսաբազմազանությունը ձևավորվում է աշխարհագրական դիրքով, բնակլիմայական, ռելիեֆային, լանդշաֆտային և այլ պայմանների, ինչպես նաև կից տարածքների ֆլորիստական և ֆաունիստական ազդեցությունների ներքո:

Դիտարկվող տարածաշրջանում հանդիպում են կենդանիներ և բույսեր, որոնց կարգաբանական խմբերից շատ տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում:

Միկրոռեգիոնալ տարածական պլանավորման հիմնադրության փաստաթղթի մշակման հիմքում դրված է տարածքային զարգացման հիմնական ուղղությունների, ներդրումների համար առավել բարենպաստ ոլորտների ընտրությունը և դրանց տարածքային տեղաբաշխման գոտիների հատակագծային կազմակերպումը, այդ հենքի վրա այնպիսի քաղաքականության մշակումով, որի իրականացումը կնպաստի մարզի տնտեսական զարգացմանը, աշխատատեղերի ստեղծմանը և բնակչության ապրելակերպի բարելավմանը:

Առաջադրվող ծրագրային փաստաթղթում արտացոլվում են միկրոռեգիոնում ներառված համայնքների տարածքային զարգացման քաղաքականության արդյունավետ իրականացմանը նպաստող քաղաքաշինական ծրագրային այն հիմնական գործողությունները, որոնք անհրաժեշտ են տարածքների մրցունակությունը բարձրացնելու և Հայաստանի մարզերի միջև զարգացման առկա անհամաչափությունները մղման համար:

«Կոտայք 9» միկրոռեգիոնի տարածքը ներառում է Գառնի, Բանախք, Գառնի, Գեղադիր, Գեղարդ, Գողթ, Հացավան, Ողջաբերդ բնակավայրերը: Բնակչության թիվը կազմում է 12742 մարդ:

«Կոտայք 9» տարածաշրջանի ՄՄՀՏՊԳ նախագիծն ընդգրկում է 231714 ուս տարածք, այդ թվում՝



- գյուղատնտեսական հողեր – 20801.41 հա, հեռանկարում՝ 20113.8185 հա,
- բնակավայրեր – 1129.88 հա, հեռանկարում՝ 1814.811 հա,
- արդյունաբերության – 126.52 հա, հեռանկարում՝ 116.79 հա,
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի – 103.18 հա, հեռանկարում՝ 115.79 հա,
- հատուկ պահպանվող տարածքներ – 280.27 հա, հեռանկարում՝ 280.3705 հա,
- հատուկ նշանակության – 0.63 հա,
- անտառային – 590.53 հա,
- ջրային – 84.72 հա, հեռանկարում՝ 84.39 հա,
- պահուստային – 0 հա:

Մարզի տարածաշրջանի ՄՄՏՀ նախագծում արտացոլված են բնական պաշարների (ջուր, հող, բուսականություն, հանքեր) ինտենսիվ և արդյունավետ օգտագործման վերաբերյալ նախագծային, պրակտիկ գործունեության, տնտեսության ճիշտ կազմակերպման, կոմունիկացիաների և կաթսայատների ճիշտ տեղադրման արդյունքները՝ անթափոն տեխնոլոգիաների և մաքրման սարքավորումների կիրառմամբ՝ կենցաղային և արդյունաբերական թափոնների մաքսիմալ օգտագործման և վնասազերծման ճանապարհով:

Միկրոռեգիոնի գյուղական համայնքներում առկա են սոցիալ-կենցաղային, ինժեներա-տրանսպորտային և կոմունալ ենթակառուցվածքների վերաբերյալ հիմնախնդիրներ, որոնք մանրամասն նկարագրված են նշված համայնքների զարգացման ծրագրերում:

Ներկա իրավիճակում բնակչության հիմնական զբաղմունքը գյուղմթերքի արտադրությունն է, բուսաբուծությունը, այգեգործությունը, անասնապահությունը, հացահատիկի մշակումը, հողագործությունը և առևտուրը:

«Կոտայք 9» տարածաշրջանի համայնքների շրջակա միջավայրի վրա տեխնածին ազդեցության հիմնական գործոններն են.

- մթնոլորտային օդի աղտոտումն արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի հատվածի ջեռուցման և ավտոտրանսպորտի արտանետումներով,
- մակերևութային ջրերի աղտոտումն արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերով,
- հողերի աղտոտումը կոշտ կենցաղային թափոններով,
- աղմուկը և էլեկտրամագնիսական ճառագայթումը,
- անտառի անկանոն օգտագործումը, որը համայնքների շրջակայքում էներգետիկ ճգնաժամի ժամանակ հանգեցրել է անտառային տարածքների և կենսաբազմազանության կրճատմանը:

Ներկայումս բնակավայրերի մթնոլորտային օդն աղտոտվում է արդյունաբերական ձեռնարկությունների, բնակելի և հասարակական շենքերի ջեռուցման անհատական սարքերի և ավտոտրանսպորտի արտանետումներով:

Հիմնականում արդյունաբերական ձեռնարկությունները պատկանում են սանիտարական վտանգավորության IV-V դասին: Ֆոնային աղտոտվածությունը բոլոր նյութերով համայնքներում զգալիորեն ցածր է սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներից (ՄԹԿ):

Համայնքում գործում են փոքր ձեռնարկություններ, որոնք գործում են պլանային արտադրողականության 5-10%-ի սահմաններում: Ընդամենն արդյունաբերական արտանետումները կազմում են 9.8 տ/տարի:

Համաձայն հաշվետվության՝ համայնքների հողերն աղտոտված են օտար մետաղներով և նոր շենքերի և շինությունների տեղադրման ընտրությունը սահմանափակված չէ: Հողերի աղտոտվածության մակարդակը գնահատված է ցածր աղտոտվածության դասը՝ թույլատրելի, էկոլոգիական իրավիճակը թավառ:



Հեռանկարում՝ տարածական պլանավորման նախագծերի իրականացման արդյունքում հողերի աղտոտվածության մակարդակի ավելացում չի սպասվում, քանի որ նոր արդյունաբերական ձեռնարկությունների կառուցում նախատեսված չէ:

Կոտայքի մարզի տարածքը հարուստ է բնական ջրի պաշարներով՝ առկա են բնական, բուժական, առողջապահական, հանքահումքային ռեսուրսներ : Այն ոչ միայն բավարարում, այլև գերազանցում է բնակչության անհրաժեշտ պահանջարկը: Մարզի բնակչության կողմից խմելու ջրի պաշարների տնօրինվող ռեսուրսները ընդհանուր հաշվով կազմում են 1929 լիտր/վրկ: Այն իր հերթին կազմում է ամբողջ խմելու ջրի 30 %-ը:

Խմելու ջրի արտաքին ցանցի երկարությունը կազմում է 566.9 կմ: Դիտարկվող միկրոռեգիոնի խմելու ջրամատակարարումն իրականացվում է «Վեոլիա ջուր» ՓԲԸ կողմից:

«Կոտայք-9» վարչական սահմաններում ներկա են մի շարք ստորգետնյա ջրեր, հորատանցքներ և աղբյուրներ, որոնք հիմնականում օգտագործվում են: Խմելու ջրի քանակը միկրոռեգիոնում կազմում է՝ 1911.3 մ³/օր կամ 22.12 լ/վրկ: «Կոտայք-9» գյուղական բնակավայրերը գտնվում են հիմնականում Արարատյան ջրավազանային կառավարման տարածքում:

Ջրամատակարարման համակարգերի կայուն աշխատանքն ապահովելու նպատակով նախատեսվում է վերջիններիս արդիականացում և վերակառուցում՝

- Բոլոր բնակավայրերում խմելու ջրամատակարարման օղակային բաշխիչ ցանցի նախատեսում՝ ապահովված հակահրդեհային հիդրանտներով:

- Ջրամատակարարման բոլոր համակարգերում (գլխամասային կառույցներ, ՕԿՋ-ներ) հերմետիկության ապահովում և սանիտարական 1-ին (30-50 մ շառավղով) գոտու սահմանում:

- Խմելու ջրի վարակազերծման նպատակով ջրամատակարարման գլխամասային կառույցներում քլորակայանների նախատեսում:

- Խմելու ջրի պարբերաբար լաբորատոր հսկողություն:

- Ջրի սպառման նկատմամբ վերահսկողության սահմանում, ջրաչափերի տեղադրում բոլոր սպառողների մոտ:

- Հոսակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված անընդհատ աշխատանքների իրականացում: Ինչը կբերի ջրային ռեսուրսների պահպանություն, տնտեսում և կայուն օգտագործում, ջրամատակարարման համակարգի հուսալիություն, հոսակորուստների կրճատում, ջրի սպառման արդյունավետության բարձրացում, բնակչության ջրամատակարարման տևողության ավելացում, խմելու ջրի բարձր որակի ապահովում և աղտոտման վտանգի նվազում:

Մարզում բացակայում են մաքրման կայանները, որի պատճառով կեղտաջրերը լցվում են գետերը:

Գյուղական բնակավայրերի բնակչությունն օգտվում է բակային հորատիպ զուգարաններից:

Ստորգետնյա, ինչպես նաև մակերեսային ջրերի ավազանն աղտոտումից զերծ պահելու նպատակով նախագծի շրջանակներում նախատեսվում է կոյուղացնել տարածաշրջանի բոլոր բնակավայրերը: Կոյուղու հոսքաջրերի հեռացումը կիրականացվի միջթաղամասային ինքնահոս կոյուղատարների և գլխավոր կոլեկտորի միջոցով:

Նախագծով կենցաղային կոյուղուն զուգահեռ նախատեսվում է նաև հեղեղատար կոյուղու կառուցում, ինչը հնարավորություն կտա անձրևաջրերից և հալոցքից առաջացած հոսքաջրերի ամբողջ ելքը ևս հավաքել և, նախքան բաց ջրահոսքեր ուղղելը, ենթարկել մաքրման:



Դիտարկվող միկրոռեգիոնի գրեթե բոլոր բնակավայրերում ոռոգումն իրականացվում է ինքնահոս եղանակով՝ երկաթբետոնե ջրանքների միջոցով, որոնց տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար: Հոսակորուստներն այդ դեպքում կազմում են 40-55 տոկոս:

Կանոնավոր ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև համակարգի վերահսկման և ոռոգման ջրի կորուստները կանխելու նպատակով նախատեսվում է ոռոգման բաց համակարգից անցում կատարել ոռոգման փակ, ջրաչափերով կահավորված ջրամատակարարման համակարգին, ինչը հնարավորություն կտա ապահովել ջրի արդյունավետ օգտագործումն ու հավասարաչափ բաշխումը:

Հաշվի առնելով ոռոգման կանոնավոր բաշխիչ ցանցերի բացակայությունը գրեթե բոլոր համայնքներում, ոռոգման ջրի անհարկի կորուստներից խուսափելու, ինչպես նաև տնամերձ հողատարածքների արդյունավետ ոռոգում ապահովելու նպատակով՝ նպատակահարմար է բնակավայրերի տարածքում նախատեսել փակ խողովակաշարերով ոռոգման ներտնտեսային բաշխիչ ցանց, որը կանցնի փողոցներին զուգահեռ՝ յուրաքանչյուր հողակտորի համար ունենալով մեկ ջրթող կառուցվածք:

«Կոտայք 9» միկրոռեգիոնի ոռոգման ջրի քանակը կազմում է՝ 4112.105 հազ. մ³, ջրի կորուստը կազմում է 30-40%: Ոռոգվում է է 1036.5 հա հողատարածք, գործող աղբյուրներից օգտագործվում է 5483.48 հազ.մ³/օր: Էլեկտրահաղորդման օդային գծերի տեխնիկական վիճակը գնահատվում է բավարար:

Մարզի տարածքի էլեկտրամատակարարման համակարգի շահագործումն իրականացվում է «ՀԷՑ» ՓԲԸ-ի կողմից, որը հիմնականում ապահովում է անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարում: Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին:

Ըստ «Հայֆուսգազարտ» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկատվության դիտարկվող տարածաշրջանի բոլոր բնակավայրերը գազաֆիկացված են: Միկրոռեգիոնի տարածքով անցնում են Ղազախ-Երևան և Իյիչևսկ-Երևան սնուցման աղբյուր հանդիսացող գազատարները:

Համայնքներում աղմուկի աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Գյուղերում ճանապարհները հիմնականում տեղական նշանակության են և մեքենաների անցուդարձը ցածր է:

«Կոտայք-9» միկրոռեգիոնում սանիտարական մաքրման ենթակա տարածքը կազմում է 1127.27 հա մակերես:

Բնակավայրերի տարածքում տեղադրված են աղբի համար նախատեսված կոնտեյներներ, որտեղից պայմանագրային հիմունքներով շաբաթական 2-3 անգամյա ռեժիմով համայնքի բոլոր բնակավայրերից աղբն աղբատար մեքենաներով հեռացվում է Հրազդան քաղաքի աղբավայր:

Տարածքը պարսպապատված չէ, չկան համապատասխան պայմաններ կոնտեյներների և աղբատար փոխադրամիջոցների լվացման և ախտահանման համար:

Իրականացման փուլում է գտնվում «Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագիրը», որի շրջանակներում նախատեսվում է Հրազդան համայնքի տարածքում կառուցել ԵՄ չափանիշներին համապատասխան սանիտարական աղբավայր և երկու մարզերում ներդնել աղբահանության ինտեգրված արդյունավետ համակարգ:

Աղբավայրի համար հատկացված տարածքը գտնվում է Հրազդան քաղաքի վարչական տարածքում, Մ-4 միջպետական մայրուղուց աջ, մոտ 350 մ հեռավորությանը, զբաղեցրած մակերեսը կազմում է մոտ 43 հա:

«Կոտայք 9» տարածաշրջանի բնակավայրերում տեղակայված է թվով 17 գերեզմանոց՝ ընդհանուր 16.15 հա տարածքում: Գերեզմանոցները գործող են, որոնց զգալի մասում



սանիտարական գոտին պահպանված չէ: Մշակվել են միջոցառումներ, որոնք կկարգավորեն գերեզմանոցների տարածքները:

Գառնի բնակավայրի տարածքում առկա 5 գերեզմանոցները պատմական գերեզմանոցներ են, որոնցից 4-ի սանիտարական գոտին պահպանված չէ: Դրանցից երեքը տեղակայված են բնակավայրի կենտրոնական հատվածներում՝ շրջապատված բնակելի տներով: Ներկայում գործող քաղաքացիական միակ գերեզմանոցի սանիտարական գոտին թեև մեծամասամբ պահպանված է /միայն մի փոքր հատվածն է մոտ բնակավայրին/, սակայն գերեզմանոցը պարսպապատ չէ: Գողթ բնակավայրում առկա 3 գերեզմանոցներից երկուսը՝ պատմական են և գտնվում են անմիջապես բնակելի հատվածում, շրջապատված բնակելի տներով: Հացավան բնակավայրում առկա երկու գերեզմանոցների սանիտարական գոտին պահպանված չէ: Ողջաբերդ բնակավայրում առկա թվով 4 գերեզմանոցներից երկուսը պատմական գերեզմանոցներ են, որոնց սանիտարական գոտին պահպանված է, դրանք գտնվում են բնակելի հատվածին հարող տարածքում: Բնակավայրի հարավ-արևելյան բարձրադիր հատվածում տեղակայված մյուս երկու գերեզմանոցները բնակավայրից ունեն մոտ 200 մ հեռավորություն:

Ծրագրով նախատեսված է գերեզմանոցների պարսպապատումը ՍՊԳ-ի չափերին համապատասխան: Այն հատվածներում, որտեղ ՍՊԳ-ն պահպանված չէ, նախատեսվում է ճանապարհի երկկողմանի սահմանազատում՝ ծառուղիների միջոցով և գերեզմանոցի պարագծով երկշարք ծառապատում: Գերեզմանոցների ճանապարհի եզրային հատվածներում, նախագծով նախատեսված է տարածքի բարեկարգում և կանաչապատում, ինչը կնպաստի փոշու արտանետումների տարածման կանխարգելմանը:

Համաձայն նախագծի՝ հեռանկարում բնակավայրերում ընդհանուր օգտագործման տարածքների մակերեսը կկազմի 16.82 հա, իսկ սահմանափակ օգտագործման կանաչ տարածքները 1014.543 հա: Շինարարական նորմերի համաձայն գյուղական համայնքներում ընդհանուր օգտագործման կանաչ տնկարկների մակերեսը պետք է կազմի 12 մ²/մարդ, իսկ փոքր քաղաքների համար 10 մ²/մարդ:

«Կոտայք 9» կատարված աշխատանքների արդյունքում կարելի է եզրակացնել, որ տարածաշրջանի զարգացման ծրագրով բոլոր նախատեսվող աշխատանքները կնպաստեն շրջանի սոցիալական և բնապահպանական իրավիճակի առողջացմանը: Բնապահպանական իրավիճակի բարելավմանը նպաստող միջոցառումները հետևյալն են՝

- բնակավայրերի գազաֆիկացման անհրաժեշտություն (Գեղարդ բնակավայր),
- համայնքի վարչական նստավայրերում շենքային և գույքային,
- անբավարար պայմաններ (ջեռուցում), տանիքների նորոգում,
- խմելու ջրի ներհամայնքային ցանցերի հիմնանորոգում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների բարեկարգում,
- ներհամայնքային փողոցների գիշերային լուսավորվածության ընդլայնում,
- դաշտավարության բնագավառում գյուղտեխնիկայի ձեռքբերում,
- գերեզմանատների ցանկապատերի կառուցում,
- մանկական խաղահրապարակի հիմնում,
- սպորտային հրապարակների հիմնում,
- ոռոգման համակարգի անբավարար վիճակի բարելավում,
- ոռոգման ջրի արտաքին ցանցերի վերանորոգման և նոր ցանցի կառուցում,
- ներհամայնքային ճանապարհների և փողոցների անբարեկարգ վիճակի բարելավում,
- տուրիզմի զարգացում,
- երկրորդական և միջգյուղական ճանապարհների ասֆալտապատում և խճապատում,



- շենքերի բակերի լուսավորության անցկացում և գյուղամիջյան ճանապարհների լուսավորության անցկացում,
- ջրամատակարարման համակարգի բարեկարգում, կոյուղու համակարգի կառուցում,
- անձրևաջրերի հեռացման համակարգի նախագծում և կառուցում,
- գետ թափվող տնտեսակենցաղային և արտադրական հոսքաջրերի կենսաբանական մաքրման կայանի նախագծում և կառուցում,
- ոռոգման ներքին ցանցի վերականգնում,
- համայնքում հանգստյան գոտիների ստեղծում,
- բնակավայրերի աղբահանման և տեսակավորման կազմակերպում,
- մսի վերամշակման արտադրամասի ստեղծում (սպանդանոցի կառուցում),
- կաթնամթերքային արտադրության զարգացում:

«Կոտայք 9» միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման նախագիծի գործունեության ընթացքում նախատեսվում է իրականացնել ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ) և հետնախագծային վերլուծություն: Դա թույլ կտա հիմնադրույթի գործունեության ընթացքում վերլուծել և դիտարկել համայնքների զարգացման իրատեսական սցենարները՝ նախանշելով առավել գրավիչ և արդի հեռանկարային ուղղությունները, ներդրումների համար ուշագրավ ոլորտները, ինչպես նաև տարածաշրջանի բնապահպանական խնդիրների ներգրավման և դրանց հնարավոր լուծումներին ուղղված համապատասխան միջոցառումները:

Հիմնադրույթային փաստաթղթի նախագծով նախատեսվում է նաև ջրային ռեսուրսների ու թափոնների կառավարման ոլորտների և խախտված հողերի հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումների իրականացման ծրագրերի կազմում և իրականացում:

Ընդհանուր առմամբ «Կոտայք 9» միկրոռեգիոնի համայնքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով են գնահատվել առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Պատճառաբանական մաս. Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման նախագծի հայեցակարգային սոցիալ-տնտեսական հիմնավորումը նպատակաուղղված է տարածաշրջանի՝ որպես ամբողջական հատակագծային միավորի և համայնքների՝ որպես դրա մասը կազմող, փոխադարձ տարածքային, տնտեսական և ենթակառուցվածքային կապերով միմյանց կապված բաղադրիչների ներքին պոտենցիալ հնարավորությունների և նախադրյալների բացահայտմանը, ինչպես նաև դրանց լիարժեք, համակողմանի և արդյունավետ օգտագործմանը: Հանդիսանալով տարածական պլանավորման հիերարխիական կառուցվածքի (տարածքային հատակագծման նախագիծ, գլխավոր հատակագիծ, գոտևորման նախագիծ) երեք մակարդակը միավորող փաստաթուղթ՝ այն դիտարկում է ինչպես տարածաշրջանային նշանակության և կարևորության ընդհանուր մոտեցումները, այնպես էլ յուրաքանչյուր հատակագծային միավորի՝ համայնքի տարածքում իրականացվող քաղաքաշինական գործունեության կանոնակարգումը:

Փորձաքննության գործընթացում միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթուղթը լրամշակվել է՝ հաշվի առնելով նաև շրջակա միջավայրի նախարարության համապատասխան ստորաբաժանումների, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունների կողմից ներկայացված առաջարկությունները:



Փորձաքննության բոլոր փուլերում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում ազդակիր համայնքի ներկայացուցիչները դրական են արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

«Կոտայք 9» միկրոռեգիոնում ընդգրկված համայնքների տարածքային քաղաքաշինական խնդիրների լուծման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության արդյունավետ կազմակերպման համար համալիր կերպով գնահատվել են առկա բնապահպանական խնդիրները, գոյություն ունեցող իրավիճակը և ընտրվել են զարգացման այնպիսի սկզբունքներ, որոնք թույլ կտան ներդաշնակորեն լուծել սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրները:

Բնակավայրերի տարածքների կարևոր էկոլոգիական հիմնախնդիրների լուծումները կնպաստեն տարածքի էկոլոգիական հավասարակշռության պահպանմանը: Շրջակա միջավայրի պահպանության բաժնում տրվել են շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների (մթնոլորտ, ջրային ռեսուրսներ, հողեր, ընդերք, կենսաբազմազանություն) վիճակի բարելավմանը և պահպանմանն ուղղված միջոցառումների հեռանկարները:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրությային փաստաթղթի շրջանակում նախատեսվող գործունեությունների համապատասխան նախագծային փաստաթղթերը՝ մինչև իրականացումը, անհրաժեշտ է օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

- Միկրոռեգիոնում քաղաքաշինական հեռանկարային լուծումներն իրականացնելիս՝ բացառել անտառային և ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:

- Հիմնադրությային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում կատարել շրջակա միջավայրի վրա ազդեցության մշտադիտարկում (մոնիթորինգ), կազմել հետնախագծային վերլուծության ծրագիր:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Հայնախագիծ» ԲԲԸ կողմից ներկայացված Կոտայքի մարզի «Կոտայք 9» միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման փաստաթղթի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

Խաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն՝

Ներիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. մասնագետ՝

Արմինե Վարդանյան

